**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերի պարզաբանման մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2024 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ՇԱ-7»**

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար շինարարական ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ՇԱ-7 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է հրավերի վերաբերյալ 25.10.2024թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 28.10.2024թ. տրամադրված պարզաբանումը՝

| Հարցադրում | Պարզաբանում |
|---|---|
| **Հարցադրում 1.**<br>Հայտնում ենք, որ մեր կազմակերպությունն ունի ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ՇԱ-7 ծածկագրով գնման ընթացակարգի 63-րդ կետով ներկայացված Ներկ լատեքսային» ապրանքատեսակի տեխնիկական բնութագրերին համապատասխանող ներկ՝ ԾԻԱԾԱՆ մակնիշի/ֆիրմայի, որն իր տեխնիկակն հատկանիշներով և պարամետրերով չի զիջում վերոնշյալ չափաբաժնում նշված մակնիշի/ֆիրմայի ներկերին։<br>Խնդրում ենք պարզաբանել, ընդունելի է արդյոք Ձեզ համար մեր կողմից առաջարկվող մակնիշի/ֆիրմայի լատեքսային ներկը։ | **Պարզաբանում 1.**<br>ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ՇԱ-7 ծածկագրով գնման ընթացակարգի հարվերը հրապարակվել է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշման 22-րդ կետը և ՀՀ կառավարության 13.10.2022թ. N 1593-Ն որոշմամբ սահմանված կարգավորումների կիրառման վերաբերյալ շրջաբերականի 3-րդ կետի դ ենթակետը, այն է ապրանքների գնման հայտը նախագծելիս, եթե տեխնիկական բնութագրերում պետք է օգտագործվեն հղումներ, ապա դրա փոխարեն սահմանվում են պատվիրատուի կարիքի բավարարման տեսակետից որպես համարժեք համարվող ապրանքների ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողը: Սույն կետի կիրառման դեպքում հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերի տեխնիկական բնութագրերում նշված ապրանքները։<br><br>Քննարկվող կարգավորման կիրառման դեպքում հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերի տեխնիկական բնութագրերում նշված ապրանքները, իսկ հայտերի գնահատման փուլում բավարար է գնահատվում միայն հրավերում նշված բնութագիր (ֆիրմային անվանում, մոդել և արտադրող) ունեցող ապրանքը։ |
| **Հարցադրում 2.**<br>ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ՇԱ-7 ծածկագրով գնման ընթացակարգի 9-րդ չափաբաժնով ներկայացված է գիպսոնիտ ապրանքատեսակը, որը /հենց գիպսոնիտ բառը/ հանդիսանում է հղում առևտրային/ապրաքնային/ նշանին կամ ֆիրմային անվանմանը/կից ներկայացվում է նկարը/։<br>Մեր կազամկերպությունն ունի TERMOFIX առևտրային/ապրաքնային/ նշանով ձեր կողմից պահանջված տեխնիկական բնութագրերին համապատասխան ապրանքատեսակ։<br>Խնդրում ենք պարզաբանել՝ Ընդունել է արդյոք Ձեր կողմից TERMOFIX առևտրային/ապրաքնային/ նշանով մեր կողմից առաջարկվող ապրանքը։<br>Միաժամանակ կարծում ենք, որ ընդունելի չլինելու դեպքում խախտվում են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները։ | **Պարզաբանում 2.**<br>Տեղեկացնում ենք, որ ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ՇԱ-7 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի մեջ Գիպսոնիտ տերմինը օգտագործվել է որպես գիպսային սվաղի անվանում, և մենք նկատի ունենք գիպսային սվաղ, ոչ թե որևէ կոնկրետ բրենդ։ Մեր համար ընդունելի են բոլոր բրենդների առաջարկները, որոնք համապատասխանում են պահանջվող չափանիշներին։ |

| | |
|---|---|
| | |

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ՇԱ-7» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Գոհար Թադևոսյանին:

**Հեռախոս՝ 583-483**
**Էլեկտրանային փոստ՝ gnumner.asue@mail.ru**